73. ՊԱՐՍԵՂԸ ՆԱՆ ԱՐՍԵՆԸ

Իլա՛լ ա, չիլա՛լ մին մարթ։ Էտ մարթը ուրա՛նց շենին էլին տվարածն ա իլա՛լ, ուրա՛ն հալալ ըշխադանքավը տունը պահելիս։ Էտ մարթին ինում ա մին կնեգյ նան մին պուճուր մադար-գյուգա՛ր տղա։ Էտ տղին անումը ինում ա Պարսեղ։

Էտ մարթին կնեգյը միշտ մարթին իրեսն յեր խոսում ա, ասըմ. — Խալխերը ուրուր կլխե տներ ըն շինում, հեյվաննե օնին, վըխճըրներեն սուրուն հմրարվում չի՞, ծյանուցը իլխին հեսաբ չունե՞, տու հի՞նչ ըս, շենին տավարը տանում ըս, պահում, պիրում, սոված փորավտ տանը վեր ըննում։

Էտ մարթը զա՛հլան տնելան, մին օր հեյվանը տանում ա շատ հեռե տեղ։ Խոխան էլ ուրա՛ն նհետ տարած ա ընում։ Հեյվանը խուխեն թափշուր ա անում, ինքյը քյինում։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, ընգնում ա մին օրիշ տեղոթունի վրեղ։ Էտ վրեղավը էնքան քյինում ա, վեր հանում ա մին ծմակ։

Ծմակն էլ հի՞նչ ծմա՞կ, վեր ծռերեն եշում ըս, փափաղըտ վեր ա ընում, երգյինքըն ըս շոռ կյամ, ասթխեր չրս տեսնում։

Էտ մթեն ծմակավը էտ մարթը մնչանք քյինա՛մ ա, վեր հանում ա մին գյուլլու բաղ, էտ բաղին չորս ընգյունա՛վը հասար ա ինում քաշած, ըրկաթե դրբզան յրա ըրած։

Էտ մարթը շատ ա չըրչարվում, վերչը դրբզին կլխավը նի յա մըննըմ բաղեն մաչը։

Էտ մարթը վեր մընում ա բաղը, ըրմանում ա, վեր էլ ըշխարքես տակեն, կլխեն հինչ ծառեր կա, էտ բաղումը ճարվում ա։ Հինչ քախծըր բար-նուբար, ցորտ-ցորտ ըխպըրնի ասիս, էտ բաղումը ճարվում ա։

Էտ բաղավը շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, տեսնում ա մին լավ պալատ։ Նի յա մնում էտ պլատեն մաչը։ Էտ պլատումը բաղի օթախ պեց ա ինում, բաղինը քլլած, նի յա մնում մին պեց օթախ, տեսնում իփած մես, օրիշ պեներ. մին տեղ ղզղընեն խուրագյավ լիդյը, պուժկընեն կյինավ լիդյը։

Շոռ ա կյամ էտ տները քյիլիդներեն պնելիքյնեն քթենում։ Պենում ա տոները նի մնում, տեսնում մին տան վրեսկե յա վեր ածած, մին տեղ արծաթ ա թեղ տված, էտ ըրծաթան էլ, վրեսկան էլ մին խիլլա յոր ա օնում, փլավան օտում, կյինան խմում, շելակը լիդյը, փորը կոշտ ըտըղան ետ ա տեռնըմ, կյամ։

Շատ ա կյամ, խրեգյ ա կյամ, հըսնում ա ուրանց շենը։

Էտ պիրած ըրծաթավը, վրեսկավը ուրան հետե պըլըտնե յա շինում, մին քանե տարե խանու նման ըպրելանը ետը, էտ մարթին աշկը ծակվում ա, ասում ա. — Մին էլ քյինամ, էլհա շելակս վրեսկավ, ըրծաթավ լցած կյամ։

Էտ մարթը հղե յա ինում բիդի վրեսկուն մադանը։

Էն պալատը էն վեր վրեսկեն, արծաթը պերալ ար, մին օխտը կլխանի օշափու պալատ ա իլա։ Էտ օշափը հանդան կյամ ա, տեսնում, ուրան կյինան խմած, փլավան կերած, վրեսկան, ըրծաթան եր կալած, քյնացած։

Տա ասում ա.— Էս մարթը, վեր էս մադանը ճընանչալ ա, մընգ էլ ա կյլական, մին բուսը պահիմ, տեսնամ էտ հի՞նչ իլաթ-միլլաթ ա, վեր ռիսկ ա ըրալ, եկալ ըստեղ։

Էտ մարթը էրկուինշի դոնումը, քյինում ա, թա վրեսկե պիրի, օշափը փռնում ա էտ մարթին վեզը կտրում, տինում ղզանումը, իփում, օտում։

Շատ ա ընցնում, խրեգյ ա ընցնում, էտ մարթին տղան մծանում ա, խելքը կտրում ա, մորան հըրցնում ա, թա— Ա՛ մար, ապան հո՞ր ա, թո՞ռն ա քյեցա՞լ, խե՞ չի կյա՞մ։

Մարը խուխեն ըսկցնում ա, վեր պենը հինչումն ա։ Նա ասում ա. — Քու հար մին քյասիբ մարթ ա իլա, շենին տավարը պհելիս, քյնացալ ա գյուդում չըմ ըշտեղա վրեսկե պերալ, տները շինալ, հեյվանների ինքյ կալալ, լավ հրուստացալ։ Ամմա վեր ծեռքեն վրեսկեն

կլխալ ա, քյացալ ա վեր մընգյ էլ վրեսկե պիրի։ Քյինացալ ա, էլ ետ չի եկա՜ լ։

Էտ կուճուր տղան եր ա կենում հորը հետան քյինամ։ Տա սորաղ ընելավ քյինում ա, տուս կյամ օշափեն երգյիրը։

Շոռ կյամ պալատնեն, վրեղերը։ Տա կլիու յա ընում, վեր էտ պալատը օշափու պալատ ա, հարն էլ եկալ ա էտ պալատը, տրա հետե էլ օշափը հորը կերալ ա, տրա հետե էլ միշտ ինքյը զենքավ, զրահավ ա շոռ կյամ, սայաղ ա կենում։

Օշափը վեր հանդան կյամ ա, տեսնում ա վեր ուրան պալատան մրթավետ ա կյամ։ Շոռ ա կյամ ամմեն մին ծակրծուկ, քթենում ա էտ տղեն։ Տահանք կրուև ըն անում։ Օշափըն օղում ա՝ ընդրան օտե, ամմա տղան հախտում ա, ուրան թորավը տամ ա, էտ օշափեն օխտը կլոխը անց կցնում, ամմա մաչի կլխան մին ճիլ մնամ ա սաղ, վեզը մնում ա կախ իլած։

Էտ օշափը ղաչանք ա անում, վեր էտ տղան մընգյ էլ թխե, ամմա էտ տղան թխում չի՜։ Էտ տղան պլատեն պինալիքնին յոր ա օնում լոխ օթախնին կրենդ-կրենդ պրավերկա անում, տեսնում մին օթախ վրեսկավ լիգյը, մինը՝ ըրծաթավ, մինը մարթու մեյիդավ լիգյը։ Մընդյ էլ էտ տները լոխ կրենդ-կրենդ քըլլում ա, տուս կյամ բախչան։

Մրխրե վախտ տղան ըտեղ ապրում ա, խելքը փչում ա, վեր քյինա ուրանց ըլած չլածը ծախե, մարը յոր օնե, կյա ըտեղ ապրե։ Էտ մրթկավը ըլած, էտ տղան հղե յա ինում, բիդի ուրանց շենը։

Քյինամ ա մեթկը մորը նհետ ասում, ամմա մարը ղաբուլ չի ինում։ Տղան ասում ա.— Կյաս, կյաս վեչ, յրես քյիննական ըմ։

Մարը տրեսնըմ ա, վեր տրղան կոխկը տեմ ա ըրալ, ինքյն էլ ա ռադի կենում։ Ուրանց տները, հեյվաննին լոխ ծախում ըն, հղե ինում օշափեն աշխարքը։ Մին խիլլա վախտ ըտեղ ապրում ըն, մարը տանը նըստում ա, տղան էլ քյինում ա վրերս անում, պիրում, մարը տանը խորադյ ա իփում, օտրմ ըն։

Մին դոնրմ էլ տղան վրերսի քյինալիս, մարը շատ ա ղանչանք անում, ասում.— Հես ա խիլլա վախտ ա ըստեղ ապրում ընք, ամմա սաղ պլատը ճընանչըմ չըմ։ Պնալիքնին ինձ տո, տեսնամ ըստեղ հի՞նչ կա, հի՞նչ չիկա։

Տղան ռադի չի կենում, ամմա մարը շատ ա ղանչանք անում։ Տղեն յրա ազդում ա, տղան պնալիքնին տամ ա մորը, համ էլ ասում. — Ա՛ մար, կարող ըս օթախնին լոխ պ ենաս, կընդ վերչին օթախան կման։

Մարը լոխ օթախնեն պեց ա անում, էտ տանը իլաած չիլաածը տեսնում, վերչի օթախը պեց չանում։

Շատ ա մտածում, խրեգյ ա մտածում, ասում ա. — Մին պեց անիմ, տեսնամ հի՞նչ կինի։

Պեց ա անում, տեսնում հի՞նչ, լոխ մեյդեր ա, վսկռնե, վեր տեռած։ Ամմա ընգուճավը մին սաս ա ընենում։ Տա շոռ ա կյամ, տեսնում էտ օթախին մեչին մին վեր, էտ վերան մին տնքտնքոց ա կյամ։

Մուտանում ա, տեսնում էն օշափն ա, վեր կլխեն մինին մի ճիլը սաղ ար մնացալ։ Տա քշտեն մեյդերը լոխ կերալ ա, ապրալ։ էտ կնեգյը տրան տրսնալավ խեղճըն ա կյամ, հիրը վեր հաց ա օղում, ճուր ա օղում, էտ կնեգյը տանում ա տամ։

էտ օշափը լվանում ա։ Օշափ նան էտ կնեգյը պարիկամանում ըն։

էտ օշափեն անա էտ կնեգյը պատճառավեր ա տեռնում։ Վեր տղան գյիդա վուչ, էտ կնեգյը պիրում ա ուրան շորում պտտորում, վեր լափ մահլում ա տեռնում, էտ տղան հրցնում ա.— Ա մար, էտ հի՞նչա յա՞։

Մարրն ասըմ ա. — Ա՛ բալա, շատ մես ըմ կերալ, նրանա յա։

Տղան միամիտ, աշխարքաս բեխաբար ա ինում, հվատում ա մորը։ Մին օր էլ տղան վեր վրրսատեղ ա ինում, էտ կնեգյը աղադվում ա։ Հո՞ւնց անե, հո՞ւնց չանե, էտ պիճը պուրում ա պարուր անում, տանում տինում էն կուրմունշեն յրա, ըշտըղավ տըղան կյալու յա։

Տղան վրերսատեղա կյալիս տեսնում ա կրմուշեն մին պարուրում խոխա յա լաց ինում։

Յոր ա օնում պուրում տոն, տամ մորը, ասում. — Ա՛ մար, աստված ինձ մին ախպեր ա տրվալ։

Մարը վայ-վրուգ ա անըմ, ասում.— Պա էս խոխան հի՞նչավ կպահենք, հի՞նչ կտանք։

Տղան ասում ա.— Աստված թա՛ էս խոխան տվալ ա մրեղ, քու ծծերրտ էլ կլըցնե, կաթնը կտաս։

Տհենց էլ տեռնում ա, սկսում ա ծեծ տալ խուխեն։ Խոխան օրանց օր մրծանում ա։ էտ տըղեն կնքում ըն, անրմը տրնում Արսեն։ Արսենը շատ ա սիրում Պարսեղին։ Արսենը մեծ ախպորը հետան մեռնում ար։ էն ըշտեղ քյինամ ա, ղանչանք ա անում, վեր ուրան էլ նհետը տանե։ Մեծ ախպերն էլ ընդրա խոսկը կոտրում չի, ընդրան շատ ա սիրում։

Տահանց մարը լավ պարիկամութուն ա անում օշափեն նհետ։

Մին դոնում էլ Արսենը լսում ա տահանց ղրուցը։

ՀաՐը նան մարը խորուրթ ըն անում, վեր մին հնար քթենան Պարսեղին սպանին։

Էա խոսկը վեր Արսենը սկանում ա, քյինում ա ախպորը առաչը, ընդրան խարար տամ, ասըմ. — Մեր ծնողնին խորուրթ ըն ըրալ, վեր քյըեղ սպանին։ Սայաղ կաց, վեր կարան վեչ սպանին։

Օշափը հինչ վեր էլ անըմ ա, կարում չի Պարսեղին սպանե։ Ծարը կտրած կյերպարանքը փոխում ա, վեր թաքուն կարե վնաս տա Պարսեղին։

Մին դոնում, վեր Պարսեղը քյեցալ ար հանդը, նա արչ ար տեռալ, քյեցալ կրմուչեն տակեն կյողլը կացալ, վեր Պարսեղը կյալիս, օտե ընդրան։

Ամմա Արսենը հորան իվիլ ա ինում պիճ։ Քյինում ա էտ կուրմունչին կոխկին մրչանք կենում, վեր ախպերը կյամ ա, ընդրան խարար ա տամ, ինքն էլ նհետը կյամ։ Օշափը վեչ մին պեն կարըմ չի շինի։ Մեհետ էլ էտ օշափը մին օց ա տեռնում, քյինամ տրռանը կլխեն կյողլը կենում, վեր Պարսեղը տոն նի մընելիս պկավը տա, խեխտի։

Ամմա Արսենը վաղ ա տամ, ախպորը դուլուղ անըմ, վեր պենը հինչումն ա, ինքն էլ ախպորը օսերին նստում, նի մընում տոն։ Էս ղոնումն էլ չի օշափը կարում ասածը անե։

Մեհետ էլ էլհա օց տեռած քյինամ ա, նի մընըմ կյումեն հուճորքը, վեր Պարսեղը ծին տանե կապե, վիզավը տա, խեխտի։ Էս ղոնումն էլ Արսենը ախպորը ղանչանք ա անում, վեր ծին ինքյը տանե կյումըմը կապե։ Կուճուր ախպոր փանդերավը Պարսեղը պըրծընում ա ամմեն մին փորցանքա։

Պարսեղը մտածում ա, փսըկվիլի վախտը կյամ ա, ամմա դե էտ ղելի սամթերքումը ախճիգյ չիկար, վեր նհետը փսակվեր։ Մորը նհետ խոսկը մին ըն անում, տա տանան տուս ա կյամ, քյինում մին թաղա թաքավերու աշխարք։

Մինչի հղե ինիլը կուճուր ախպորը նհետ խոսում ա ուրան նպատակին մասին։ Մին պեց տանակ էլ տինում ստոլեն, համ էլ ասում.

— Տանակը վեր նհետ ինի՞, նշան ա, վեր ինձ մին տժբախտութուն ա պտահալ, հետաս կկյաս։

Տա հղե յա ինում, քյինամ։ Էտ թաքավերութունան տուս ա կյամ, նի մննում օրիշ թաքավերութուն։ Ընդրա առաչին ինում ա մին մեծ ծմակ։ Էտ ծմակը քյինալիս մին պռանչունց ա ըսկանում, քյինում ա, տեսնում մին փալանգյ, վրեննը մին ղալամ ընգյած, ղալամն էլ

ա̈ռնա̈ծ։ Էտ փա̈լա̈նգյը կարում չի տեղան տո̈ւրո̈ւր կյա։ Ղաչանք ա անում էտ մարթին, վեր ո̈ւրա̈ն թրավը թխե, վըեննը ազադի, հինչ վեր օղի, կտա։

Էտ տղան ասում ա.— Վախըմ ըմ քյըեղ ըղադիմ, ինձ վնաս տաս։

Փա̈լա̈նգյըն ասում ա. — Վընաս չըմ տալ, հինչ վեր օղիս, նհենց կանիմ։

Պարսեղն ասում ա — Քու ճտերատ էրկունը ինձ կըտաս։

Թըրավ թըխըմ ա, վըեննին վա̈հրը տո̈ւս ա կյամ, վըեննը գինջտնում։

Էտ փա̈լա̈նգյը ո̈ւրա̈ն ճտերան էրկունը տամ ա Պարսեղեն։ Տա Փըլա̈նգյեն ճտերը եր կալած հղեն շարունակում ա։

Շատ ա քյինո̈ւմ, խրեգյ ա քյինո̈ւմ, տեսնում ա ծմակեն մաչին մին ղա̈շա̈նգյ տեղ, մին լա̈վ տոն շինած։ Էտ տղան նի յա մըննըմ էտ տոնը, տըեսնում ա մին լա̈վ, ղաշանգյ ախճիգյ էտ տանը նստած։

Էտ ախճիգյը էտ տղեն ասում ա. — Հու կյամ ա էս սամթերքը, պիտի ինձ նհետ կըռեվ անե, մհենգյ տու յա պիտի ինձ նհետ կըռեվ անիս, յա թա̈ չէ վեննըտ վետանըտ առաչին չըս կարալ տինիս։

Տղան համաձայնվում ա կըռեվ անե։

Պարսեղը նան էտ ախճիգյը կըռեվ ըն անում։ Տու մի ասիլ, էտ տանը մին վեր կա կտրած, կլխավը մին գյա̈րա̈ քըցած, էտ ախճիգյը օղում ա, թա Պարսեղին քցի էտ վերը։ Էն փըլա̈նգյին ճոտերը յրա յըն պըրծնում, էտ ըխճկանը յրան, էտ ախճիգյը Պարսեղեն պեց ա թողնում։ Պարսեղը ըղագվում ա։

Պարսեղը ո̈ւրա̈ն փըլա̈նգյին ճոտերը եր կալած հղեն շարունակում ա։ Քյինա̈մ ա, հսնում Թաքավերեն քաղաքը։ Փըլա̈նգյեն ճոտերը ծմակըմը կյեղում ա, ինքյն էլ քյինա̈մ մին պառավ կնգա տոն, ղոնաղ ինո̈ւմ։

Մին օր էտ Թաքավերը աղառամիշ ա ընո̈ւմ։ Հա̈քյիմնեն ասում ըն. — Պիտի մըրալու կաթնը խմե, վեր լվա̈նա̈։

Էտ Թաքավերին էրկու փեսա յա ընում, մինը՝ գեներալ, մինն էլ՝ իշխան։ Տահանք շատ ըն չըշարվում, խրեգյ ըն չըշարվում, կարըմ չըն մըրալու կաթնը ճարին։ Մին փեսան էծու կաթն ա պիրում, մեշնա̈կ փեսան էլ վըխճարու կաթն ա պիրում, ամմա տըհանցա մինն էլ Թաքավերեն քյո̈մա̈գյ չի անում։ Էտ խա̈բա̈րը Պարսեղը սկանում ա։

Կյամ ա Թաքավերեն կոշտը, ասում. — Թաքավերն ապրած կըենա, վեր յըես քյըղհետե մըրալու կաթնը պիրիմ, ինձ հի՞նչ կտաս։

Թաքավերն ասում ա.— Թաքավերոթունես կեսը քյըեղ կտամ։

Էտ Պարսեղը ո̈ւրա̈ն ղենքը-ղըրահը կապում ա, փըլա̈նգյին ճոտերը

յոր օնում, նի մննում ծմակը։ Ճոտերը սաղ ծմակավը շոռ ըն տամ, էտ ծմակում հինչ ապրանք ընում ա, լոխ ղալ մեչ անում, մին մարալ փոնում, կթում, պիրում թաքավերեն հետե։

Ամմա թաքավերեն էն էրկու փեսան, էն տղեն հետը պահում ըն, տղան վար կյամ ա քաղաք, ընդրան փոնում ըն, կաթնը խլում, էն տղեն էլ տոն քցում։

Կաթնը պուրում ըն թաքավերեն հետե։ Թաքավերը խըմում ա, լվանում։ Մին խիլլա վախտանը ետը, էտ թաքավերը էլհա հիվանդանում ա։

Էս դոնում էլհա հաքյիմնեն ասում ըն. — Պիտի մըրալու մես օտե։

Էտ փեսեքյը քյինամ ըն էծու, վխճարու մես պուրում, ամմա վեչ մինն էլա օքութ չի անում։

Ըտեղ թաքավերը մին պեն ա կըլխու ընդնում։ Ասում ա. — Էտ հո՞ւնց ա, կաթնը պերալ ըք, ամմա մեսը կարըմ չըք պիրիքյ։

Էտ փրեսեքյը քյինամ ըն, էն տղեն քթանըմ, մեծ ռուշվաթ վրդավ օնում, ամմա էլ տղան ասում ա. — Ծեր մին պենը էլա հարկավեր չի՞, ինձ մին փեչատ օնիմ, պիրաք ծեր շանը փիչատիմ, ետնան քյինամ, մեսը պիրիմ ծրեղ տամ։

Տըհենց էլ անըմ ըն։ Թաքավերը էլհա յա լվանում։ Ամմա էտ թաքավերին պռավաձ վախտրն ար, հիվանդութունը նրանա ծեռք չար քաշում։ Թաքավերը մին էլ ա հիվանդանում։ Էս դոնում էլ ծանդր։ Հաքյիմնեն ասում ըն, վեր պիտի մրալու սըերտ ճըղե, սրտին մեչին արունը խառնե կաթնեն նհետ խմե։ Տա հո՞ւնց ծեռք կպերին, փսոտենքյը մնացալ ին մտրծելիս։ Էլհա քյինամ ըն էն տղեն կոշտը։

Էն տղան ասում ա. — Կաթնը կպիրիմ ծրեղ տամ, ամմա սըերտը յըես պիտի պիրիմ։

Կաթնը պիրում ա, տամ փսոտանցը, սըերտն էլ ինքյն ա տանըմ, թաքավերեն աշկեն ըռաչին ճղում, խառնում կաթնեն նհետ, թաքավերը խմում ա, լվանում։

Թաքավերը լվանալան ետը ուրան ծառաներան հրցնում ա. — Հի՞նչ մարթ ըս, հո՞ւ վրս, հո՞ւ չըս։

Էտ տղան նաղլ ա անում ուրան անա։ Թաքավերը դյիդալավ վեր մրալին կաթնը, մեսը էտ տղան ա պերալ, ամմա փսոտենքյը խափալ ըն, թա ուրանք ըն պերալ, փսոտանցը տուս ա անում պլատան, նահանց վեչ մին պեն էլա տամ չի, ամմա ուրան կուճուր ախճիդյն էլ Պարսեղին նհետ փսակում ա, օխտը օր, օխտը քշեր հրսա-

նեքյ ա անում, խոսկ տամ, վեր ո̈ւրա̈ն մոնելանը եսը Թաքավերը Պարսեղեն նշանակին։

Փսկվելան եսը Պարսեղը միշտ վըերսի յա քյինա̈մ, ամմա միշտ ո̈ւրա̈ն առուծեն ճոտերը նհետը տանում ա։

Մին դո̈նում էլ քյինա̈մ ա, հսնում ծմակեն էն տեղը, ըշտեղ ինքյը եկալ ա, պտահալ ծմակումը շինած մին պլատու, մեջին էլ մին ղոշշաղ ըխճկան։ Էտ ախճիգյը ստիրում ա տղեն, վար կըռեվ անեն, ամմա էն պայմանավը, վեր առուծեն ճոտերը կպոտեն, նոր կըռեվ անեն։ Տհենց էլ անըմ ըն։ Էտ ախճիգյը հախտըմ ա տղեն։ Տըղեն քըցըմ ա վերեն մաշը։ Առուծեն ճոտերը վերշանք ծիքյ-ծիքյ ըն անըմ, վեր տըրո̈նշը քյո̈մա̈գյ անին, ամմա կարըմ չըն։ Հենց էտ վախտը փակվում ա էն տա̈նա̈կը, վեր ո̈ւրա̈նց տաննն ա Թողալ, ստոլեն յրան, վեր հիրը վեր փակվե, նեղ տեղ ա, հետան կյան։ Արսենը տըսնալավ վեր տա̈նա̈կը փակվալ ա, ախպորը հետան քյինո̈ւմ ա։ Շատ ա քյինո̈ւմ, խըեգյ ա քյինո̈ւմ, հսնում ա էն ծմակը, վըդեղ ախպերը տո̈ւս ա կա̈լա̈լ առուծեն վետանը փոշը, էրկու ճոտ եր կա̈լա̈լ։ Տա տեսնում ա հա̈մա̈ն առուծեն վետանը ղա̈լա̈մը ընգած, ղա̈լա̈մըն էլ ա̈ռնած։ Առո̈ւծը կարում չի տեղան տո̈ւրո̈ւր կյա։

Էտ մարԹին ղաշանք ա անըմ, ասում, վար. — Մին դո̈նում էլ ըս տու ինձ ըզադալ, մհենգյ էլ ըզադե, էրկու ճոտ էլ մհենգյ կտամ։

Արսենը էնքան Պարսեղին նման ա ընո̈ւմ, վեր առո̈ւծը գյիդո̈ւմ ա, Թա̈ էն առաշվա տղան ա, վեր ո̈ւրա̈ն ըզադալ ա։ Արսենը կլո̈խ ա ըննո̈ւմ, վեր Պարսեղը էս հղցավն ա քյացալ, ինքյն էլ էտ առո̈ւծեն ա պտահալ։

Արսենը վեր առո̈ւծեն վետանը ղա̈լա̈մը տո̈ւս ա օնում, էրկու ճոտը ինքյ ա օնում, հղեն շարունակում։

Շատ ա քյինո̈ւմ, խըեգյ ա քյինո̈ւմ, հսնում ա Թաքավերեն քաղաքը։ Քաղաքեն ժողովուրԹը ո̈ւրո̈ւր անավ ըն ընգալ, վեր Թաքավերեն փեսան քյեցալ ա վերսի, էլ եկալ չի։ Էս տղեն տըսնալավ ըստեղ ասում ըն, վեր Թաքավերեն փեսան եկալ ա, էտ տղան դա̈ստի կլո̈խ ա ընո̈ւմ, վեր ո̈ւրա̈ն ախպերը Թաքավերեն փեսան ա տեռալ, ծեռքը տնո̈ւմ ա ճկատեն, վար գյըրվանքիս Թա ազատու յա, խնԹրում ա էտ մարԹուցը վեր ո̈ւրա̈ն տանին Թաքավերեն պալատը, ո̈ւրա̈ն օԹախը։

Տհենց էլ անում ըն։ Վեշ հաց ա օտում, վեշ ճո̈ւր ա խմում, վեշ էլ խոսում ա կնգանը նհետ, կնեգյը մնում ա ըրմացած։ Ո̈ւրո̈ւգյո̈նը վեր կնեգյը տեղերը շինում ա, վեր քոն ինեն, էտ տղան ղա̈մա̈ն տո̈ւս ա օնում, տնում ո̈ւրա̈ն նան կնգյանը զաԹավը, վեր սահ-

մանը հնցնե վեչ։ Կնեգյը ըրմանում ա, վեր հինչի հետե յա տհենց անում։ Էտ տղան վեր քրշրրհանա եր ա կենում։ Կնգանան հրցնում ա, թա ինքյը վեր հղցավ ա քյինացալ վրերսի, օշը կլխեն չիլալ, մրտան ընգալ ա, թող նշանց տա։ Քյինացած հղեն նշանց ըն տամ։ Էտ տղան եր ա կենում ուրան առուծեն ճոտերը յոր օնում, քյինամ։

Շատ ա քյինում, խրեգյ ա քյինում, հանում ա էն ղոչչաղ ըխճըկանը պալատը, տեսնում մին շատ ղաշանգյ ախճիգյ քշտեն էլ էրկու առուծի ճոտեր։ Էտ տղան կլոխ ա ընում, վեր էտ էրկու առուծեն ճոտերը ուրան ախպորրն ա։ Տա սգիրում ա ըխճկանը, վեր ախպորը տեղը ասե։ Էտ ախճիգյը հալա մին վզավ չօնում, ետնան ասում ա.
— Հալա եք մին կրռեվ անինքյ, ետնան կասիմ։

Էտ ախճիգյն ասում ա.— Կրռեվը կրռեվ, ամմա պետք ա առուծեն ճոտերը կասենքյ։

Ամմա տղան ռաղի չի կենում։ Տահանք կրռեվ ըն անում, առուծեն ճոտերը քյոմագյ ըն անում տղեն։ Տղան հախտում ա, վերը պանում, տեսնում վար ախպերը վերումն ա։ Տուա ա օնում, էրկու ախպերը չորս ճոտերավ էտ ըխճկանն էլ յոր ըն օնում, քյինամ թաքավերեն պալատը։ Ըտեղ ամմեն հինչ պարզվում ա։ Էտ ղոչչաղ ըխճըկանն էլ փսակում ըն Արսենին նհետ, մեծ ախպերը ուրան կնգանավը նան թիգյնապահերավը կուճուր ախպորը տանում ա, թողնում ուրանց տանը։ Էրկու ախպորրն էլ մարը թազագան հրսանեքյ ա անում ուրանց տանը։

Կուճուր ախպերը ուրան կնգանավը մնում ա ուրանց տանը, ամմա մեծ ախպերը ետ ա տեռնըմ թաքավերեն պալատը։ Թաքավերը պռաված ա ընում, կանուխ մեռնում ա։ Պարսեղին նըշանակըմ ըն թաքտվեր, ամմա Արսենն էլ ուրանց պալատումն ա տարը տըրական տեռնում։ Էրկու ախպերն էլ խուխատար ըն արեռնում։ Ուրանց գյանքեն մնչին էրկու ախպերն էլ լավ պարիկամոթուն ըն անում, կողի հորավ խորթ ըն ինում, մորավ հալալ ըն ընում։ Տրա համար էլ ուրուր հետե թրեվրթիգյունք ըն ընում, մինը վար նեղ տեղ եր ընում, էն մինը նեղ օրեն հանում ա։ Էսքանավրն էլ նաղը պրծնում ա։